և յանակնունելի պահու մխիթարեալ էին զազգն եւ զինքեանս, և զգոհունակութիւնս բոլոր միաբանաց հանդերձ օրհնութեամբ։

Երբեմն Լատին կղերք ամբաստան եղեն 'ի կարեւոր տեղիս զազգէն Հայոց, որպէս գրեցաք. այլ 'ի սոյն ժամանակի չհանդարտեալ՝ առաքեցին զոմն 'ի Կոստանդինուպոլիս, եւ նոյն ինքն Տեսուչ վանաց նոցին հանդերձեցաւ գնալ անդ. զի հնարս գտցեն խափանել զգործն Հայոց, որպէս հակառակութեամբ իւրեանց առիթ եղեն բազմադիմի վնասուց 'ի գալստեան հրովարտակին, զի նախատինս դիցեն Հայոց արտաքսելով 'ի Գերեզմանէն. և իրրեւ տեսին թէ չեհաս հրովարտակն ըստ մտաց Իլամին և Հէօճմէթին, որպէս գրեցաւ յաւուրս բաժանորդութեան, սկըսան դեգերիլ 'ի դրունս այլազգեաց և ստիպէին զԻպրահիմ դատարանին առնուլ Իլամ 'ի Դատաւորէն հակառակ Հայոց, զի դիւրաւ վարեսցեն զնոսա արտաքս 'ի Գերեզմանէն, նաեւ զՅոյնս. և Հայք զահի հարեալ վարանէին. թէպէտ նա բացասէր և ընդդիմանայր նոցա, բայց առանձին ազդ արարեալ Հայոց, բանայր զդրունս մեծամեծ ծախուց, որպէս արարեալ էին երբեմն վասն դրան Բեթղեհէմի. և կարի դժուարին էր 'ի նեղ ժամանակին յայնմիկ լցուցանել զանզուսպ ագահութիւնս նոցա, որոյ վասն Պօղոս Եպիսկոպոս և Խորհրդականք բազում անգամ թախանձանօք գրեցին փութացուցանել զհրովարտակն. զի դադարեսցին Լատինք 'ի խլրտելոյ, և ինքեանք ազատեսցին 'ի ձեռաց զրկողաց, և շնորհ Արքայի լիցի հաստատուն և անկորուստ մշանջենաւոր։ Լուեալ զայսոսիկ բանս իշխանաւորաց ազգին՝ պատուիրէին համբերել և սիրով գընալ ընդ օտարս, եւ զգուշանալ 'ի կռուոյ, թէեւ Հայք չէին այնքան կռուասէր, որքան խաղաղասէր և համբերող. բայց դատաստանն տարօրինակ ըստ տեղեաց. զի մեծամեծք այլազգեաց զհետ էին գտանել միայն կռուան ոտից իւրեանց, եւ 'ի փոքր կայծէ յարուցանէին հրդեհ մեծ, թափել զքրիստոնեայս 'ի դրամոց 'ի յագուրդ իւրեանց. և Հայք գիտելով զայս ամենայն 'ի սէր Ս. Տեղեաց և ազգին համբերութեամբ տանէին ամենայնի։